

## ԽՈՐԻՆ ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ

**Հուլիսի 15-ի օդանավային աղետի զոհ դարձած՝ Հայաստանի ու Իրանի քաղաքացիների բոլոր ազգությունների հարազատներին ու ընտանիքի անդամներին:**

Համաերկրացիներ, ազգակիցներ, հարազատներ,

Դժվար է սփոփանքի բառեր գտնել մեր բոլորի անասելի կորստի վիշտը թեթևացնելու համար: Ճակատագրի դաժան խաղն ու տեխնիկայի անկատարելությունը անդառնալի կորուստներ խլեցին մեզանից: Այսպիսի ծանր վշտերին դիմակայելու միջոցը մշտապես անսասան կամքի ուժի ցուցաբերումն ու տոկոնությունն է եղել և հեռացածների հիշատակը վառ պահելու պարտականության զգացումը:

Մարդկային է, որ հարազատի ու ընկերոջ կորուստը ավելի խորն էս զգում: Մասիս Մաթյանը Իրանում ապրող հայության հասարակական ու մշակութային կյանքում իր ուրույն տեղն ուներ... Նրա դերերը թե՛ կյանքում, և թե՛ բեմում հարազատ էին ու սրտամոտ:

Սիրելի Մասիս, դու քո դերերը լավ կատարեցիր, բայց այս վերջինը քեզ չսազեց, այս քո դերը չէր: Դու մեզ միշտ ուրախացնում էիր, հիմա այս ցավի հետ ինչպես ապրենք: Այս ինչ բան էր որ դուն արիր...

Սիրելի Մասիս, դու միշտ մեզ հետ կլինես...

*Հայաստանում, Ամերիկայում, Գերմանիայում, Անգլիայում, Ավստրիայում և Շվեդիայում ապրող Իրանահայ Ազգային ու Մշակութային միության անդամներ:*

*Ի դեմս Արամայիս Միրզախանյանի*

16 հուլիսի 2009թ.  
[Aramais.m@live.se](mailto:Aramais.m@live.se)